

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Տ. Ե. Ս. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Ազգիս Վեհ՝ Հայրապետ բարեհաճեցաւ ամսոյս 9 ին շքեղ եւ փառաւոր հանդիսիւ ի բարձր աստիճան Եպիսկոպոսութեան վերածել հետեւեալ բարեշնորհ վարդապետները, այն է Լիմ՝ անապատի վանահայր Պօղոս վարդապետ Մէլիքեանց, Կուտինայի Առաջնորդ Գէորգ վարդապետ Դերձակեան, Մայր Աթոռոյս միաբաններէն՝ Յովհաննէս վարդապետ Տաթեւացի, Գանձակու Յաջորդ Թագէոս վարդապետ Տէր-Դանիէլեանց, Ստեփաննոս վարդապետ Մխիթարեանց, Արիստակէս վարդապետ Սեդրակեանց եւ Փոխ — թեմակալ Երեւանայ Գէորգ վարդապետ Սուրէնեանց։

Շատ կողմերէն բազմախուռն ազգայինք ներկայ էին սոյն մեծաշուք հանդիսի։

Յետ ձեռնադրութան Վեհ՝ Հայրապետ ցվերջ Ս. Պատարագի ներկայ եղաւ կանգնելով Հայրապետական Աթոռում։

Հոգեղգօն նորաստեղծ Եպիսկոպոսներին շնորհաւորելով՝ կցանկամք Ս. Հոգւոյ ամենակարող զօրութեան օթանդակութիւնը իւրեանց նոր ցտանձնած բարձր Առաքելական պաշտօնի մէջ ունենալիք եկեղեցաշահ եւ ազգօգուտ ձեռնարկութիւններում պարգերես եւ արգիւնաւոր հանդիսանալոյ համար։

Ս. ՄԻՒԹՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍ.

Ինչպէս պաշտօնական ծանուցմամբք Արարատ ամառոցոյս միջոցաւ յամսոց հետէ կանխաւ յընդհանուրս հրատարակած էինք, եւ մեր սիրելի Ազգայնոց հրաւէր կարգացած, նոյնպէս որոշեալ օրը՝ այսինքն Մայիս ամսոյս 16 ին յաւուր տօնի Հոգեգալստեան՝ Վեհ՝ Հայրապետ Ազգիս կատարեց Ս. Միւռնի օրհնութեան մեծաշուք եւ փառաւոր հանդէսը, որի նկարագրութիւնը աստանօր կիութամբ ամփոփել՝ իբր կանխաբան՝ մի համեստ՝ հարեւանցի խորհրդածութեամբ հանդերձ։

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծաշուք՝ սրբապարաւ եւ նուիրական հանդէսներէն մին եւ նշանաւորն է